

կանգնենք Իտալիան, իմ բարեկամներս, ոչ թէ որպէս Վելլա-
Ֆրանկներ ձեռք, այլ իսպալկան ձեռք:

Ինչպէս տեսնում էք, Գ. ք. Մկրտումեանը ոչ միայն լաւ
չը գիտէ ոուսերէն լեզուն, որից թարգմանում է, այլ և լաւ
ծանօթ չէ այն նիւթի հետ, որի մասին խօսում է իր թարգ-
մանած յօդուածում: Վիլլա-Ֆրանկա քաղաքը նրա թարգմանու-
թեան մէջ դառնում է Վիլլա—Ֆրանկներ, մի ժողովուրդ, որ
գոյութիւն ունի միայն թարգմանչի երեակայութեան մէջ, իսկ
Վարէզէ և Կալատաֆիմի վայրերը դառնում են մարդիկ, որոնք
նոյնպէս գոյութիւն չեն ունեցել իրականութեան մէջ:

Այդ բաւական չէ: Թարգմանիչը հայերէն է: Լաւ չը գիտէ,
օրինակ նա գրում է՝ «սանօլնիկ»: «Այդ դեռ փոքր (քիչ) էր»:
«Ինչպէս իմացաւ» (հէնց որ իմացաւ, իմացաւ թէ չէ, իմանա-
լուն պէս), «ի շարը գործել» (զեղծում), «Գարիբալդիան խառ-
նուրդ» (гарibaldiевскій сбродъ), «փառարանութիւն գէպի
Գարիբալդին», «Աստուածային բացասմունք» (Աստուծու բացա-
սումն), «հասցէ ներկայացնել զիկտատօրին», «սակաւաթեւե-
րը» (немногие) և նոյն-իսկ քահանայի մասին «հայր սուրբ»
(փոխանակ՝ «Տէր հայր») եայլն:

Եթէ այս բոլորի վրայ աւելացնենք, որ զրբոյլը տպուած է
սարսափելի վրիպակներով (օրինակ տպուած է՝ փոխանակ «Լը-
գուվէի»—«Լիգուէի» փոխանակ «չէ կարող շանհանգստանալ»—«չէ
կարող անհանգստանալ», փոխանակ «ամենամեծողովրդական»
—«ամենաթողովրդական», փոխանակ «հրահանգներին»—«հանգա-
մանքներին» եայլն), չենք կարող չը գալ այն եզրակացութեան, որ
Դօրբոյլիւրօվի յօդուածը («Հայր Գալաղցին և իր քարոզները»)
պէտք է նորից թարգմանել, Գ. ք. Մկրտումեանի թարգմանու-
թիւնը չեղած համարելով:

S. B.

33 «Կեանքի գնով». պատմութեամբ Ա. Խեանի (Իրամի), ազատ թարգ-
մանութիւն B. Փ.-ի և Մ. Ե.-ի. 13 եր., զինը 2 կող., Բագու, 1902 թ.:

Տուէք ինձ անապատ, ասում էր հայր Գալաղցին Իտա-
լիայի ազատութիւնից առաջ, և տուէր ինձ ազատութիւն, և ես
անապատը դրախտ կը դարձնեմ:

Իտալիան ազատուեց, շատ բան փոխուեց այնտեղ, ազա-
տութիւնը շատ բարիք բերեց հետը, բայց և այնպէս անապատը
դրախտ չը դարձաւ: Որովհետեւ միմիայն ազատութիւնը, քաղա-
քական ազատութիւնը անկարող է այգալիսի հրաշք գործել:

Ազատ եւրոպայում ամեն օր հազարաւոր մարդիկ մեռնում են սովից և մտնում են անառակների ու յանցաւորների շարքը կամ կախում ու ծխախեղդ են լինում դառն աղքատութիւնից: Առանց ազատութեան չը կայ դրախտ, բայց դրախտ ստեղծելու համար բացի ազատութիւնից անհրաժեշտ են նաև ուրիշ հասարակական պայմաններ, որոնց սաղմերն ենք միայն տեսնում այժմ եւրոպայում:

Քանի գոյութիւն ունի աշխարհումս հարստութեան և աշխատութեան հակապատկերը, տրագեդիան չի պակասի երբեք մարդկային կեանքից:

Այդ հետաքրքրական հարցն է շօշափում իր «կեանքի գնով» վերնագրով պատմութեամբում Ա. Նիբամը (և ոչ Նեբամը, ինչպէս տպուած է հայերէն թարգմանութեան ձևակառն):

Ահա այդ պատմութեամբի հէնքը (казна): Մի աշխատադուրկ ու քաղցած մարդ գիշերով մտնում է բուրժուա Դիւվալի տունը, ուզում է նրան սպանել ու յետոյ գողանալ փողերը դրամարկիցի, բայց խղճում է նրան և փորձում է դրամարկը շուռ տալ, փողերը վերցնել ու փախչել: Սակայն քնած տանտիրոջը զարթեցնելու վախիցը նա չի կարողանում ազատ գործել, ոտը սայթաքում է, վայր է ընկնում և դրամարկը—պահարանը չըրջւում է վրան: Արմունկը ջարդւում է, ուսը տեղահան է լինում: Աղմուկը զարթեցնում է տանտիրոջը: Նա, ուշօրվերը ձեռքին, գալիս տեսնում է գողին պահարանի տակը ճգմուած: Ուզում է սպանել, բայց չի սպանում: Ոստիկանութեան էլ չի դիմում, այլ խոստանում է ազատութիւն տալ, եթէ նա խօսք տայ այնուհետև ազնիւ կեանք վարել:

Դողը յայտնում է, որ ինքը առաջին անգամն է այդ յանցանքը գործում, որ ինքն՝ իրան և իր նմաններին մեղաւոր չի համարում, այլ նոյն-իսկ աւելի բարձր է դասում այն բուրժուաներից, որոնք զբաղուած են դիմականորումս գողութեամբ:

«Մենք նման ենք հալածական չների, ասում է նա: Ինչու ես էլ հարուստ չեմ ծնուել, ես այդ չը գիտեմ, չը գիտէք և դուք: Բայց այդ ձեզ համար միևնոյնն է: Իսկ ես,—ես տանջւում եմ դրանից: Ուստի և վճեցի գողութիւն անել... Ուղղակի, անմիջական գողութիւնը, այն գողութիւնը, որ մարդուս ենթարկում է ձերբակալուելու վտանգին, աւելի ազնիւ բան է, քան սովորական, քողարկուած գողութիւնը, որից տառապում են ինձ պէս հազարաւորները»:

Երբ Դիւվալը յայտնում է, որ ուզում է ազատ թողնել նրան, ու հարցնում է՝ «Միթէ չէք ուրախանալ, եթէ ազատութիւն ստանաք», նա պատասխանում է. «Ամենևին, ինչքան

պէտքն է ազատութիւնը: Միթէ հիւանդանոցից դուրս գալուց յետոյ ստիպուած չեմ լինելու գողութեամբ պարագելու: Շատ էլ նախանձելի բան չէ սովորման լինելու ազատութիւնը:

Դիւ վալը ազատում է նրան առանց որ և է պայմանի, բայց հնարաւորութիւն է տալիս նրան ապրել ազնիւ աշխատանքով: Եւ այդ «գողը» դառնում է նրա անձնուէր բարեկամը և զոհում է կեանքը հրդեհից փրկելու համար մի պատկեր, որ թանկագին էր Դիւ վալի համար:

Ինչպէս տեսնում էք, Խիրամի պատմութեամբ մէլօգրամատիկական բնութեութիւն է կրում և մի քիչ միաժամ լուծումով է վերջանում, բայց նա զուրկ չէ զրական արժանաւորութիւններից: Դժբախտաբար թարգմանութիւնը անաշուղ է. Յ. Փ. և Մ. Շ. «ազատ» են անուանել իրանց թարգմանութիւնը, կարծելով, թէ այդ բանը իրաւունք է տալիս իրանց ազաւազելու հեղինակի գրածը և կրճատելու իրանց չը հասկացած կամ դժուար թարգմանելի տեղերը (օրինակ, վերև բերած կտորից մի բնորոշ պարբերութիւն է կրճատուած):

Երբ որ Онъ говоритъ безъ малѣйшаго озлобленія թարգմանում են «նա խօսում էր առանց քաշուելու», — այդ կը նշանակի ոչ թէ այն, որ «ազատ» են թարգմանում, այլ որ աղաւաղում են գրուածքը: Իսկ երբ Онъ откинулся на спяку, закрывъ глаза, съ висѣвшей плетью сломанной рукой թարգմանում են՝ «նա մէջքը թեք տուեց աթոռին, ծածկելով աչքերը մտրակի նման կախ ընկած ձեռքով», — այդ կը նշանակի թարգմանել՝ առանց հասկանալու:

Տ. Յ.

Willam Watson. «Խիրամի արեւելքը». թարգմ. անգլ. Խոսրով, 30 եր. գինը 50 սան. Պարիզ, 1903:

Խիրամի Արեւելքին, արիւնսաներկ Թիւրքահայաստանին են նուիրուած Ուիլլիամ Ուատսոնի այն ոտանաւորները, որ պ. Խոսրով թարգմանել է անգլիերէնից:

Չը կան անարատ, իդէալական մարդիկ, ևս առուել չը կան անարատ, իդէալական ազգեր, քանի որ միջազգային բարոյականութիւնը աւելի ստոր է քան անհատական բարոյականութիւնը, բայց չը կայ մի ազգ, որի զաւակները այնքան համարձակութեամբ, այնքան արիւարար նշաւակէին իրանց ազգի դորձած յանցանքները, որքան անգլիական ազգը: Անգլիական ազգի մեծութեան ամենախոշոր ապացոյցներից մէկն է այդ: